Հաստատվում է
Տնօրեն՝ Ն. Տողանյան
01.09.2023թ.

Ստուգված է
Տարրական մ/մ
Նախագահ՝ Կ.Չիբուխչյան

Երևանի Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի թ.57 հիմնական դպրոց

2023-2024 ուստարի
Երաժշտության
թեմատիկ պլանավորում

Դասարան՝ 2-րդ

Ուսուցիչ՝ Ա. Բարեղամյան

Դաս	Էջ	Թեմա. « ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՐԶ ԵՎ ՄԱՏՉԵԼԻ ԺԱՆՐԵՐԸ (ՏԵՍԱԿՆԵՐԸ)» 17 ժամ	ժամ
Նպատակ		• Զարգացնել՝ Երաժշտության մեջ արտահայտչական միջոցները, խոսքի մասերը զգալու կարողությունը: • Զարգացնել երկմաս երգերը ճանաչելու և տարբերելու կարողությունը: • Զարգացնել երաժշտությունը վերլուծելու ընդունակությունը: • Զարգացնել ռիթմական նվագարաններով նվագակցություններ կատարելու կարողությունը:	
Վերջնարդյունք		• Իմանալ ինչպես մայրենի լեզուն,այնպես էլ երաժշտական լեզուն ունի խոսքի մասեր, դրանք են՝հնչյունը,մոտիվը, ֆրազը, նախադասությունը և այլն: • Ճանաչել երաժշտության արտահայտչական միջոցները • Կատարել ռիթմական նվագարաններով նվագակցություններ:	
1	4-9	Երգ Ուսուցանել՝ Ռ. Ալթունյանի «Դպրոցի ճամփան» երգը, Ունկնդրել 1-ին դասարանում անցած նյութերը:	2
2-3	10-15	Երգի տեսակները Ունկնդրել՝ Կոմիտասի «Կաքավիկը», Մոցարտի «Օրորոցայինը», Ռ. Մելիքյանի «Մանուկն ու ջուրը», Ա. Խաչատրյանի «Օրորոցայինը», Բ. Կնաչյանի <<Քուն եղիր բալաս>>, <<Արև, արև>> Ուսուցանել՝ հայկ. ժող. «Նանիկ ասեմ բալիկիս», «Գացեք, տեսեք», «Ձան գառնուկ» երգերը:	3
4	16-21	«Պար» Ունկնդրել՝ Կոմիտասի «Շուշիկի պարը», Ա. Խաչատրյանի «Ծերունիների պարը», Ուսուցանել՝ հայ. ժող. «Նախշու՛ն կաքավ, կաքավի՛կ» պարերգը:	2
5	22-25	Պարերգ	

		Ունկնդրել՝ Ա. Խաչատրյանի «Աղջիկների պարը», Ա.Սպենդիարյանի «Տղամարդկանց պարը», Ուսուցանել՝ հայ. ժող. «Հոպա զարկե՛ ու քելե՛» պարերգը:	3
6	26-29	Քայլերգ Ուսուցանել՝ «Ուղիղ կարգով» ժող երգը:	2
7	30-37	Քայլերգի տեսակները Ունկնդրել՝ Էդ. Միրզոյանի «Տիկնիկների պարը», Ա. Լուսինյանի «Արջուկների պարը», Մ. Մազմանյանի «Կատվի պարը» Կատարել՝ «Եկեք մրցենք» երգը: ՈՒնկնդրել և սովորել <<Հայրենիք>> երգը	3
8	38-49	Երաժշտության տեսակները հանդես են գալիս միասին՝ երգ, պար, քայլերգ Ունկնդրել Ռ.Մելիքյանի <<Մանուկն ու ջուրը>>, Կատարել <<Աքլորիկի, թխսի և ճուտիկների երգը>>, «Գացեք, տեսեք», «Ջան գառնուկ» երգերը:	2
Դաս	Էջ	Թեմա. «Ո՞ՒՐ ԵՆ ՄԵԶ ՏԱՆՈՒՄ ԱՅԴ ԺԱՆՐԵՐԸ» 13 ժամ	Ժամ
Նպատակը		● Զարգացնել երաժշտության տեսակները լսելու, ընկալելու և տարբերելու կարողությունը: ● Զարգացնել երգերի մեղեդիները ռիթմական վանկերով /թի-թի, թա, թա-ա/ կատարելու կարողությունը: ● Զարգացնել երգերը թեթև և նուրբ, բնական ձայնով կատարելու հմտությունը: ● Զարգացնել առանց լարվածության, մաքուր ինտոնացիայով երգելու, սեփական ձայնը ընկերների ձայնին հարմարեցնելու կարողությունը: ● Ծանոթացնել «թա-ա» կես տևողության հնչյունին և նոտագրությանը: ● Զարգացնել երաժշտական խաղերում կերպարը ճիշտ վերարտադրելու կարողությունը:	

Վերջնար- դյունքները		• Տարբերակի քայլերգային երաժշտությունը; • Ճիշտ կեցվածքով,ճիշտ շնչառությամբ և առոգանությամբ կատարի քայլերգային երգը։ • Կատարի քայլք՝ երաժշտության բնույթին, ռիթմին, տեմպին համապատասխան։ • Իմանա երաժշտական հնչյունների տևողությունը և իրար հաջորդող տարբեր տևողությունների փոխհարաբերության անվանումը։ • Ներկայացնի մեղեդու ռիթմի մեջ դադարների անվանումը։	
9-10	50-53	Օպերա Ունկնդրել Լ. Վ. Բեթհովենի «Ուրախ, տխուր» ստեղծագործությունը, Ուսուցանել Մ. Մազմանյանի «Աքլորիկի, թխսի և ճուտիկի երգը»:	3
11	54-55	Բալետ Ունկնդրել՝ Ա. Խաչատրյանի «Աղջիկների պարը», Ա. Խաչատրյանի «Վարդագույն աղջիկների պարը»,	3
12-13	56-57	Սիմֆոնիա Ունկնդրել Է. Միհրանյանի «Պատանեկան» սիմֆոնիայից մեկ հատված, Կրկնել հայ. ժող. «Արև, արև» երգը:	3
14-15	57-63	Երգը օպերայում, բալետում, սիմֆոնիայում . Ուսուցանել Մ. Մազմանյանի «Թխսի և կատվի կռիվը» և հայ. ժող. «Մայրիկիս» երգերը, Ունկնդրել Ա. Խաչատրյանի «Օրորոցայինը» «Գայանե» բալետից և հատվածներ Պ. Չայկովսկու, Է. Միրզոյանի սիմֆոնիաներից:	3
15		1-ին կիսամյակի ամփոփում-դաս համերգ	1
Դաս	Էջ	Թեմա. «Ո՞ՒՐ ԵՆ ՄԵԶ ՏԱՆՈՒՄ ԱՅԴ ԺԱՆՐԵՐԸ» 10ժամ	Ժամ
Նպատակը		• Զարգացնել երաժշտական ստեղծագործություններ լսելու և երաժշտության տեսակները զգալու, համեմատելու կարողությունը։	

		• Զարգացնել մաքուր ինտոնացիայով և արտահայտիչ երգելու հմտությունը: • Զարգացնել երաժշտական լսողությունը: • Զարգացնել պարային շարժումները և ամբողջական պարեր կատարելու կարողությունները:	
Վերջնարդյունք-ները		• Լսի, զգա և համեմատի երաժշտության տեսակները: • Երգի ձեռքի նշաններով և նոտաներով: • Երգի արտահայտիչ և մաքուր ինտոնացիայով:	
21-22	64-69	«Պարը բալետում, օպերայում և սիմֆոնիայում» Ունկնդրել Ա. Խաչատրյանի «Վարդագույն աղջիկների պարը», «Սուսերով պարը» «Գայանե» բալետից, Ա. Սպեդիարյանի «Ալմաստ» օպերայից «Տղամարդկանց պարը», Մ. Մազմանյանի «Կատվի պարերգը» «Ճուտիկ» օպերայից, Պ. Չայկովսկու «Փոքրիկ կարապների պարը» «Կարապի լիճը» բալետից: Ուսուցանել հայ. ժող. «Հանիկ, նայ՛ երգը:	5
23-24	70-73	«Քայլերգը օպերայում, բալետում, սիմֆոնիայում» Ունկնդրել քայլերգեր Ա. Խաչատրյանի «Գայանե» բալետից և Ա. Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայից, Ա. Խաչատրյանի երկրորդ սիմֆոնիայից «Որսկան ախպերը» և Լ. Վ.Բեթհովենի «Ուրախության ձոներգը» 9-րդ սիմֆոնիայից, Ուսուցանել «Գովք Չամբարին» երգը:	5
Դաս	Էջ	Թեմա . ԻՆՉՊԵՍ Է ՍՏԵՂԾՎՈՒՄ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ (ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՅԲՈՒԲԵՆԸ) Երաժշտական արտահայտչական միջոցները » 18 ժամ	Ժամ
Նպատակը		• Ծանոթացնել ժողովրդական, աշուղական և դասական երաժշտության նմուշներին • զարգացնել խոսակացական և	

		երաժշտական ինտոնացիաների ընդհանրությունները և տարբերությունները զգալու կարողություն • երգերի և ձայնավարժությունների միջոցով զարգացնել երգչային կատարողական հմտությունները • զարգացնել միաձայն երգերը մաքուր ինտոնացիայով երգելու կարողությունը • զարգացնել տարբեր բնույթի ինտոնացիաներով քառատող և համապատասխան մեղեդիներ ստեղծելու կարողությունը • զարգացնել երկձայն մեղեդիները ձեռքի նշաններով և նոտաներով երգելու կարողությունը	
Վերջնարդյունք-ները		• երգի միաձայն մեղեդիները մաքուր ինտոնացիայով • ստեղծի տարբեր բնույթի ինտոնացիաներով քառատողեր և համապատասխան մեղեդիներ • երգի երկձայն մեղեդիները ձեռքի նշաններով և նոտաներով	
25-26	74-76	Ի՞նչ է երաժշտական խոսքը Ունկնդրել Ա. Խաչատրյանի «Անդանտինո» երգը, Ուսուցանել «Խնկի ծառ» երգը:	3
27-28	77-79	Երաժշտական ստեղծագործության կառուցվածքը Ունկնդրել Ռ. Մելիքյանի «Մանուկն ու ջուրը» երգը, Ուսուցանել հայ. ժող. «Լեպհո, լե, լե» երգը:	3
29-30	80-81	Տեմբր (ձայներանգ), երաժշտական արտահայտչական միջոցներ Յ. Բրամսի «Հունգարական պարը», Ունկնդրել Ա. Սպենդիարյանի «Օրորոցայինը» ջութակի և թավջութակի կատարմամբ,	3
	82-84	Սովորել Գարուն եկավ երգը, Դ.Կաբալևսկու <<Երեք Ընկերուհիներ>> ստեղծագործությունը	3
		Ամփոփել տարվա ընթացքում անցած նյութը՝	4

		երաժշտատեսական գիտելիքները, երգերը և այլն: Կազմակերպել դաս-համերգ, երաժշտական ժամանց և վիկտորինաներ	

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

Ուսուցանել «Հայրենիք», «Քեռին եկավ մեր բակը» երգերը։

Ունկնդրել ռուս կոմպոզիտոր Դմիտրի Կաբալևսկու «Քայլերգի երեք տեսակները»։

Ուսումնասիրել երաժշտական հնչյունների տևողությունները։

1.Ո՞ր է տանում քայլերգային երաժշտությունը։

2.Ինչպե՞ս է կոչվում երաժշտական հնչյունի գրառման նշանը։

3.Ինչպիսի՞ն են լինում երաժշտական հնչյուններն ըստ տևողության։

4.Ինչպե՞ս են անվանում իրար հաջորդող տարբեր տևողությունների փոխհարաբերությունը։

5.Ինչպե՞ս են անվանում երաժշտական դադարները (մեղեդու ռիթմի մեջ)։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. « Հայրենիք», «Քեռին եկավ մեր բակը» երգերի բառերը։
2. Երաժշտական հնչյունի գրառման նշանի անվանումը։
3. Երաժշտական հնչյուններն ըստ տևողության։
4. Իրար հաջորդող տարբեր տևողությունների փոխհարաբերությունը։
5. երաժշտական դադարների (մեղեդու ռիթմի մեջ) անվանումը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա

1.Քայլել և ծափով ցույց տալ «Հայրենիք» քայլերգի զարկերը։

2. Կատարել «Հայրենիք», «Քեռին եկավ մեր բակը» երգերը

3.Ունկնդրելով տարբերակել քայլերգային երաժշտությունը։

4.Ունկնդրելով երաժշտությունը՝ ծափ տա երգի ռիթմը, ոտքի թաթերով հարվածի զարկերը։

5.Ցուցադրել «Քեռին եկավ մեր բակը» երգի ռիթմը։

Ի՞նչ է երաժտական խոսքը

Թեմատիկ պլան

Ունկնդրել Բեթհովենի «Արջամուկ» երգը, Ժ. Բիզեի «Տղաների քայլերգը» «Կարմեն» օպերայից, Ռ. Մելիքյանի «Կլոր պարը», «Գարուն եկավ» երգերը:
Սովորել «Գարուն եկավ» երգը:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ի՞նչ է երաժշտական խոսքը:
2. Ինչպե՞ս է կոչվում մանկական բարձր ձայնը:
3. Կարո՞ղ է միևնույն երգը հնչել որպես երգ, որպես պարերգ, որպես քայլերգ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա

1. Որ ինչպես խոսակցական լեզուն, երաժշտությունը նույնպես ունի իր լեզուն:
2. Որ մանկական ձայներն են՝ դիսկանտ կամ սոպրանո:
3. Որ երգը կարող է լինել մեկ՝ որպես երգ, մեկ՝ որպես պարերգ, մեկ՝ որպես քայլերգ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Տարբերել մոտիվ, ֆրազ, նախադասություն մասնիկները;
2. Ունկնդրելով Լ.Վան Բեթհովենի «Արջամուկ» և Ժորժ Բիզեի «Կարմեն» օպերայից «Տղաների քայլերգը» ստեղծագործությունները ասել՝ ո՞ր ստեղծագործությունում է հնչում մանկական ձայնը:
3. «Գարուն եկավ» երգը երգել որպես երգ, և՝ որպես պարերգ:

Ունկնդրել Ռ. Մելիքյանի «Մանուկն ու ջուրը» երգը, Յ. Բրամսի «Հունգարական պարը»
Սովորել հայկական ժողովրդական «Լեպո լե, լե» երգը:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ի՞նչ է տեմպը:
2. Ի՞նչ պարի տեսակներ գիտեք:
3. Քանի՞ մասից է բաղկացած «Լեպհո լե՛, լե՛»:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա

1. Որ երաժշտության կատարման արագությունը անվանում են տեմպ:
2. Որ պարերը լինում են տարբեր:
3. Որ «Լեպհո լե՛, լե՛» երգը ունի երկմաս կառուցվածք:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

1. Որոշել երաժշտության տեմպը:
2. Երաժշտության հնչյունների ներքո կատարել պարային շարժումներ:
3. «Լեպհո լե՛, լե՛» երգի առաջին մասը երգի դանդաղ, երկրորդը՝ արագ:

Տեմբր (հնչերանգ)
[Թեմատիկ պլան]

Ունկնդրել Ա. Սպենդարյանի «Օրորոցայինը» թավջութակի կատարմամբ:
Սովորել Ա. Լուսինյանի «Բարձրիկ Հայաստան» երգը:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ի՞նչ է մեղեդին:
2. Ի՞նչ է տեմբրը:
3. Ո՞վ է «Բարձրիկ Հայաստան» երգի հեղինակը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա

1. Որ առանց բառերի երաժշտությունը անվանում են մեղեդի:
2. Որ երաժշտության հնչերանգը կոչվում է տեմբր:
3. Որ «Բարձրիկ Հայաստան» երգի հեղինակը Արեգ Լուսինյանն է:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Երգը կատարել առանց բառերի:
2. Ճանաչել որևէ երաժշտական գործիքի հնչերանգ:
3. Կատարել Արեգ Լուսինյանի «Բարձրիկ Հայաստան» երգը:

Կրկնել տարվա ընթացքում անցած նյութը՝ երաժշտատեսական գիտելիքները, երգերը և այլն:
Մասնակցել դաս-համերգին, երաժշտական ժամանցին և վիկտորինաներին:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Երաժշտության ի՞նչ տեսակներ գիտեք:
2. Ի՞նչ է ռիթմ:
3. Ի՞նչ է օպերան:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա

1. Որ երաժշտության տեսակներն են՝ երգը, պարը, քայլերգը:
2. Որ երկար և կարճ տևողությունների հաջորդականությունը անվանում են ռիթմ:
3. Որ օպերան ներկայացում է, որտեղ դերասանները իրար հետ խոսում են երգելով:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Տարբերել երգը, պարը, քայլերգը:
2. Բնական նվագարաններով նվագակցել երգը:
3. Ներկայցնել «Ճուտիկ» մանկական օպերայից որևէ երգ: